

Մի քիչ մաքուր օդ. նորոգված զբոսայգին խոստանում է դառնալ օազիս Երևանի բետոնե ջունգլիներում



ARMENIA NOW / ARMENIANOW.COM

Ճարտարապետ Ռամբախը մոռացված զբոսայգին կվերածի կանաչ դրախտի
[Վահան Իշխանյան](#)

«ԱրմենիաՆաուի» թղթակից

Published: 16 Մայիս, 2008

Պուշկինի այգին Երևանի այն հազվագյուտ կանաչապատ տարածքներից է, որ փրկվել է սրճարանային ներխուժումից ու գազոնների ցեմենտապատումից, և բարեկարգման աշխատանքներից հետո կդառնա հրապուրիչ հանգստյան գոտի:

Բաղրամյան պողոտայում գտնվող հանրությանը հայտնի Պուշկինի այգին, որ 1995 թվականին վերանվանվել է Սիրահարների զբոսայգի, արդեն սկսել էր գրգռել հայ բիզնեսամենների ախորժակը, և անկյունում՝ մի հսկա հատվածում, կառուցվում է «Եվրոստանույուտ» շինարարական ֆիրմայի գրասենյակը, իսկ հետնամասի մի ընդարձակ տարածք յուրացրել է պետական մի հիմնարկ:

Այսուհանդերձ, 1,6 հեկտար տարածքը հնարավոր եղավ փրկել շնորհիվ շվեյցարահայ բարերարներ Ալբերտ և Ժան Պողոսյանների «Պողոսյան» հիմնադրամի, որը 2005-ին նախաձեռնեց այգու բարեկարգումը որպես նվեր Երևանցիներին (www.pushkinpark.am):

228 միլիոն դրամ արժողությամբ նախագծի աշխատանքները սկսվեցին 2006-ին, իսկ շինարարությունը՝ մեկ տարի առաջ: Բացումը սպասվում է սեպտեմբերի 21-ին՝ Անկախության օրը:

Շինարարական աշխատանքները իրականացնում է «Հայաստան» համահայկական հիմնադրամը:

Անցյալ տարի այգու գույքագրման աշխատանքներին մասնակցած Սոցիալ-Էկոլոգիական ասոցիացիայի նախագահ Սրբուհի Հարությունյանն ասում է, որ չի ստորագրել արձանագրությունը, քանի որ հաշվել է հատման ենթակա 9 ծառ, իսկ ներկայացվել է 19-ը:

Այսուհանդերձ, նախագիծն անցել է բնապահպանական փորձաքննություն և ստացել դրական եզրակացություն:

Նախագծի համակարգող, հուշարձանների պահպանության ակտիվիստ Մարիատ Պետրոսյանն ասում է, որ 19 չորացած ծառերից 16-ն են հատվել, իսկ երեքը մնացել են որպես դեկորատիվ ձևավորում: Նա ասում է, որ առանձնակի ինսամբով են վերաբերվում ծառերին, և նախագծված առվակի հունը փոխվել է՝ ծառերին որևէ վնաս չպատճառելու համար: Նույնիսկ թեքված ծառը, որ կարող է տապալվել, դեռևս չեն հատում, մինչև բնապահպանները չահագանգեն: Այգու 300 ծառերը մեկ տարի անց կհամալրվեն նոր մշտադալար և պտղատու ծառերով:

Այգու նախագծման հեղինակ ֆրանսիացի լանդշաֆտային ճարտարապետ Պիեռ Ռամբալը, որ հայտնի է այգիների իր նախագծերով, այգում ուսումնասիրելով աշխատանքները՝ ասում է, որ նախորդ այցելությունից հետո փոխվել է տեսքը, կտրվել են մացառները, և երևում է այգու տարածությունը: «Նախագծի գաղափարն այն է, որ այգում քայլելիս անընդհատ նոր տեսարաններ հայտնաբերես», - ասում է նա:

Երկու ջրվեժները և առվակները գոյացնում են լճակ և մի կղզյակ-բեմահարթակ, իսկ «ցամաքում» կլինի 200 տեղանոց ամֆիթատրոն, որտեղ կանցկացվեն երաժշտական փառատոներ: Իսկ նստարանները կլրացնեն նաև նստելու ու պառկելու համար նախատեսված կանաչ գազոնները:

Այգու շահագործումը 27 տարով հանձնվել է «Պողոսյան» հիմնադրամին: